կանխին աւերուած է լինում և առ հասարակ մարդս դժուարանում է, երկար մտածելու և մտաւոր աշխատանք կատարելու, եթէ այսպիսի դրութիւնը յարատեւում է. և երեխէն տանջուած է իւր կարողութիւնից վեր աշխատանք վերցնելու, հարկաւ դորա հետեւանքը պիտի լինի ուղեղի գործունէութեան բաւականին խանգարումը։

Մի քանի բժիշկներ հաստատում են մինչև անգամ թէ՝ ուսումնարանն է մեղաւոր, որ երեխաների մէջ սկսել է յառաջ գալ այնպիսի հոգեկան աւերումներ, որպէս է «յանկարծակի թալկացումն կամ լուսնոտութիւն», «Սուրբ Վ խոտիկաքաւումը» (որ դժուարաբոյժ ախտութիւններից մինն է), յետոյ վերջապէս հոգեկան հիւանդութիւնք կամ խելագարութիւնք։ (Այս բանը մանաւանդ պնդում է Գէյերը)։

Այս մտքերը դեռ ևս իւրեանց տակ այնքան լուրջ փաստեր չունին. ուստի մեզ կընկնի այժմ միայն ընդհանրօրէն զգուշացնել ժողովրդին և մանկացոյց լինել թէ՝ «ահա այս բանի մէջ մեծ վտանգ կարող է լինել»։ Մինչև ցայժմ այդ վտանգը միայն այնպիսի երեխաների վերայ ենք նկատել, որոնց վերայ բայց յիշեալ ներգործող պատճառները կից են եղել և մարմնոյ պակասութիւններ և կամ առանձին տրամադրութիւնք կազմուածքի։ Ուստի զանազան հետախոյզ անձինք վճիռ են տուել նայելով թէ՝ այս և այն դիպուածում՝ ուսումնարանի զանցառութիւնքն են աւելի զօրեղ հանդիսացել, թէ՞ նոյն իսկ ժառանգական տրամադրութիւնը և երեխի թոյլ կազմուածքը։ Այսպիսի ժամանակ՝ շատ կարևոր կը լինէր ուշ դարձնել և ուսման եղանակին կամ մեթոդային, ուսուցիչների անձնականն ազդեցութեանցը և նոցա ի՞նչպէս երեխաների հետ վարվելուն[1]։

Մի այլ դէպ ժամանակի կը թողնենք Ուսումնարանի գլխաւոր զանցառութեանց մինի քննութիւնը, այն է՝ աշակերտաց Աշու-լէ կռօ-պֆ-ը (մէջքի ծռուելը)։ Մանաւանդ շատ յաճախ պատահող Վէլ կոշէ ժո--էլը, որ բժիշկները անուանում են «սքօլիօզ»։

---

## ՁԱՅՆ ՀԱՐԱԶԱՏԻ

Հօդոյս ցանկալի՝ քաղցրիկ Արարատ՝
Օրօրոց հայկեան հարազատ մանկանց,
Սոխք անունիցդ՝ որ դքև շրջապատ
Խօսս կը սարսէին տեղերումն իւրեանց։

Այդ ո՞ր չար ոգի մտան կամապաշտի
Գէլխահար տառան՝ ձոխ փառաց բաղդին
Ցանկդ խրամատեց՝ մութինդ քակեց,
Ալով թշնամիք քեզ հեշտ տիրեցին։

Ուստի տկարաց զաւակունք Հայկայ
Արտասուօք թողին հայրենիք ծանկեալ,
Գնալ օտար երկիր՝ ցիր և ցան եղան.
Ուր և անձկանօք ցուրդ կան 'ի բացեայ։

---

(1) Շատ բարւոք կը լինէր, եթէ թոյլ կազմուածքի տէր տղոց ամենևին ուսումնարան չտարկէին մինչև 10—12 տարին։ Եւ ծնողք իրանք չափաւոր կերպիւ պարապէին կամ եթէ ճնար կայ, վարժապետներին տուն հրաւիրէին։ Որովհետև, իրաւի, այդպիսեաց հետ, մանաւանդ մատաղահաս ժամանակ, շատ զգոյշ եւ քնքոյշ վարմունք է պէտք։ Իսկ ում յայտնի չէ, թէ մեր ուսումնարաններում շատ վարժապետներ երեխայից հետ տմարդօրէն եւ երբեմն միանգամայն գազանաբար վարուել գիտեն։ Ցաւն էն է որ հասարակութիւնն ինքն եւս արդարացնում է վարժապետաց այդպիսի վարմունքը, զանազան սպակսն առակաց սղալ թելադրութիւնով։

Ուր ուրեք հասան փառօք պերճացան,
Մե՛ծ մեծ կալուածոց ժառանգել դարձան,
Ընտանեաց որդւոց թէև տէր եղան,
Բայց քեզ չմոռցան ով իմ Հայաստան:

Լայնարձակ դաշտեր՝ խոտաւետ տեղեր
Զուարթ մրգօք լեցուն այգիներ,
Պարտէզ, բուրաստան—էլ շատ ստացան.
Որ հայրենիք չէր—էլի ոչինչ էր:

Մե՛ծ շքեղազարդ ամպամած տներ,
Մե՛ծ մեծ պալատներ, անուշ խորտիկներ,
Օտարանի շորեր թէև ունեցան,
Դարձեալ Հայաստան բոլորից քաղցր էր:

Թէպէտ բիւր տեսակ պերճ ուրախութեան
Հանդէսներ լինէր մէջ օտարութեան,
Դարձեալ նման չէր անշուք հայ խրճթում
Եղած քաղցրութեան, պարզ հացկերու-
թեան:

—Ո՞ր հայրենասիրի հարազատ որդւոց՝
Օտար գեփիւռներ ու խոխոջանքներ՝
Կարեն սփոփել հառաչանք ու խոց,
Ու իւր հայրենեաց սրտից սէրն հանել:

Տէր. Գալուստ Տէր Բաղդասարեանց:

ի Շամախի.

ՀԱՆԵԼՈՒԿ

Անուշք դաղան հրեշ մըն է,
Ուր որ դիմէ սարսափ կածէ.
Նաւէն յաջող յառաջ կերթայ,
Նաւն ալ իրմէն՞ շատ կասկայ:

Ծնած չծնած կսկսի լափել.
Վրան նայիս, գլուխ ալ չունի.
Թէ որ մեծյաւ, Աստուած չընէ,
Քաղաքը, գեղեր կըկլանէ:

Ե. Ա. Զ.

# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

# ՕՐԱՑՈՅՑ

# 1870

## ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Մայր Ս. Աթոռոյս Տպարանէն մաքուր և ընտիր տպագրութեամբ ՚ի լոյս ընծայեալ վերոյիշեալ Օրացոյցը, որ իւր մէջ կը պարունակէ կարևոր յաւելուածք և տեղեկութիւնք, իւրաքանչիւր ամսոյ վերջը մշակականք, տօնաւորներ չորս եղանակաց վրայ, և Կայսերական տօնախմբութեանց օրերը և այլն. կը ծախուի Կոնսիստորիայից և Հոգևոր Կառավարութեանց մօտ: Գինն է 20 կոպէկ: (2)

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ: